ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
09.01.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
***«ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»***
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

| **1. Հասարակական կազմակերպության՝** | |
|---|---|
| 1.1 Լրիվ անվանումը | «ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» |
| 1.2 ՀՎՀՀ-ն | 02579493 |
| 1.3 Գտնվելու վայրը | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Փ.ԲՅՈՒԶԱՆԴԻ Փ. 13 ԲՆ.71 |
| 1.4 Պետական գրանցման համարը | 211.171.03058 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | 2005-02-18 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | +37491407750 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | panarmgeobook@gmail.com |

| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
|---|---|---|
| Անունը | Ազգանունը | Պաշտոնը |
| ՌԱՖԱՅԵԼ | ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ | Նախագահ |

| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը |
|---|
| Զարգացնել <<Հայաստանի աշխարհագրությունը>> որպես բնական և կիրառական գիտություն,ստեղծել լայն հասարակայնության համար հանրամատչելի քարտեզներ, սխեմաներ, ատլասներ և տեղեկատվական բնույթի տեքստային տարբեր նյութեր |
| Ստեղծել տեղետվական բանկ Հայաստանի Հանրապետության, Պատմական Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ օգտագործելով Հայաստանում և համայն աշխարհում գոյություն ունեցող տվյալներ, ներառյալ գիտական աշխատություններ, հոդվածներ, ատլասներ, քարտեզներ և այլ տպագրական նյութեր |
| Ստեղծել Հայաստանի Հանրապետության համար բացառիկ աշխարհագրական լանդշաֆտի/ լեռներ, անտառներ, գետեր և այլն/ վերաբերյալ գրավիչ նյութեր, տարածելու համար աշխարհում Հայաստանի բնական աշխարհագրական բարեմասնությունները, նպատակ ունենալով Հայաստանը հետաքրքիր դարձնել օտարերկրացիների և տեղացիների համար |
| Մասնակցել միջազգային աշխարհագրական ասոցիացիաների կողմից կազմակերպված գիտաժողովներին, համագործակցել աշխարհի նման կազմակերպությունների հետ, իրականացնել դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում գիտական աշխարհագրական հետազոտություններ |
| Հայաստանի բնությունն ու աշխարհագրությունը աշխարհի գիտնականների համար բացահայտելու նպատակով Հայաստանում կազմակերպել սեմինարներ, գիտական համաժողովներ, միջազգային տուրիստական և աշխարհագրական արշավներ |
| Երիտասարդության շրջանակներում իրականացնել <<Իմ Հայրենիքը>> Հայաստանն է ծրագիր, Հայաստանը երիտասարդ օտարերկրացիների և աշխարհասփյուռ հայ երիտասարդների ծանոթացնելու համար |
| Նկարահանել Հայաստանի գեղատեսիլ բնության և աշխարհագրության մասին ժապավեններ, աշխարհի առաջնակարգ և հայտնի հեռուստաալիքներով հեռարձակելու համար |
| Հրավիրել համահայկական սեմինարներ աշխարհի հայ ազգի գիտնականների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության և Պատմական Հայաստանի աշխարհագրության և բնության վերաբերյալ հարցերի շուրջ |
| Իրականացնել Կազմակերպության նպատակներից բխող և ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ ծրագրեր |
| Կազմակերպության ծրագրերն իրագործելու համար սերտորեն համագործակցել ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ |

| **4 Հասարակական կազմակերպության՝** | |
|---|---|
| 4.1 Անդամների թիվը | 3 |
| 4.2 Կամավորների թիվը | |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | 1 |

| **6. Իրականացված ծրագրեր՝** | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | <<Օտար ամայի ճամփեքի վրա>> հեռուստահաղորդաշար | ք.Երևան | Ներկայացնել աշխարհի զանազան երկրներում բնակվող հայ համայքները և նրա ունեցած ավանդը տվյալ երկրի մշակութային և տնտեսական կյանքում | Ավարտված |
| 2 | <<Մերոնք>> հեռուստահաղորդաշար | ք.Երևան | Ներկայացնել աշխարհի տարբեր երկրներում ապրող ու գործունեություն ծավալող հայերին, որոնք իրենց աշխատանքով մեծ համբավ են բերում հայերին | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Օտար ամայի ճամփեքի վրա>> հեռուստահաղորդաշար | ք.Երևան | Ավարտված | Ներկայացնել աշխարհի զանազան երկրներում բնակվող հայ համայքները և նրա ունեցած ավանդը տվյալ երկրի մշակութային և տնտեսական կյանքում | Հաղորդումների նկարահանում և Հ-1 հեռուստաալիքով ցուցադրում |
| 2 | <<Մերոնք>> հեռուստահաղորդաշար | ք.Երևան | Ավարտված | Ներկայացնել աշխարհի տարբեր երկրներում ապրող ու գործունեություն ծավալող հայերին, որոնք իրենց աշխատանքով մեծ համբավ են բերում հայերին | Հաղորդումների նկարահանում և Հ-1 հեռուստաալիքով ցուցադրում |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 41,870,512 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 41,870,512 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | 41,870,512 | <<Հայաստանի Հանրային հեռուստաընկերություն>> ՓԲԸ |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 41,870,512 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 41,870,512 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 41,870,512 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | 41,870,512 |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 41,870,512 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |
| Նշումներ | | | |
| | | | |

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________3________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________

ստորագրություն, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրություն, անունը, ազգանունը

«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ 4
հեռ./ֆաքս՝ /010/ 524724
էլ. փոստ : perfectaudit@bk.ru
Կայք՝ www.perfectaudit.am

# Անկախ աուդիտորի եզրակացություն

***Հասարակական կազմակերպության խորհուրդին***

***Եզրակացություն «Համահայկական աշխարհագրական ասոցիացիա» հասարակական կազմակերպության գործունեության հաշվետվության աուդիտի վերաբերյալ***

***Կարծիք***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Համահայկական աշխարհագրական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «ՀԿ») 2022 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընդգրկող ժամանակաշրջանի համար կազմված հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը(այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն):

Կազմակերպության ղեկավարությունը ֆինանսական հաշվետվությունը կազմել է՝ հիմնվելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27 մայիսի 2020 թվականի թիվ 477-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների վրա:

Մեր կարծիքով, «Համահայկական աշխարհագրական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2022 թվականի տարեկան մուտքերի ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը, ինչպես նաև դրամական միջոցների օգտագործման, կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը՝ համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27 մայիսի 2020 թվականի թիվ 477-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների:

***Կարծիքի հիմք***

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի* » (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այդ կանոնների:

Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ՀԿ գործունեության հաշվետվության համար*

Ղեկավարությունը պատասխանատու է՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված լրացման կարգին համապատասխան ՀԿ գործունեության հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար,որն ըստ ղեկավարության,անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվության պատրաստումը ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ՀԿ-ի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն,որ ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից,անկախ դրա խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը,նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով,և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ,որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է ,քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը,քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն,զեղծարարություն,միտումնավոր բացթողումներ,սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին առընչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ՝ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը,ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ,և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝գնահատում ենք թե՛ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն,որը կարող է էական կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք,որ առկա է էական անորոշություն,ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին,կամ,երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն,ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք տարեկան հաշվետվության ընդհանուր ներկայացումը,կառուցվածքն ու բովանդակությունը,ներառյալ՝ բացահայտումները,ինչպես նաև ֆինանսական հաշվետվության հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց,ի թիվս այլ հարցերի,հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների,ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի,ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերբերյալ էթիկայի պահանջների,ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին,որոնք ըստ ողջամիտ ենթադրության կարող են անդրադառնալ մեր անկախության վրա և որտեղ կիրառելի է անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

25 հունվար, 2023 թ.

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն Ա. Բաբայան

աուդիտոր Է. Աբրամյան

02591995
«ՓԸՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ»
"ПЕРФЕКТ АУДИТ"
"PERFECT AUDIT"

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 10.08.2023 16:06